ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«09» Նոյեմբերի 2017 թվականի № 133-Ա

ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը և «ԷՅ ԹԻ ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերության 2017 թվականի օգոստոսի 8-ի թիվ 05 դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԷՅ ԹԻ ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերությանը տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ԷՅ ԹԻ ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերության ՀՀ Արարատի մարզի Ուրցաձորի տրավերտինի հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու համար, ընկերությանը 2007թ.-ի դեկտեմբերի 18-ից մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 18-ը ժամկետով տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/305 (նախկին 14/509) թույլտվությունը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-305 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 1-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին,
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ